https://doi.org/ 10.56246/9789939117652-328

ՄԻՀՐԻ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ «ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍՈՒՄ

ՍԱԹԵՆԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ամփոփում: *Հոդվածը նվիրված է Միհր Աստծո դիցաբանական և աստղաբանական բնութագրի քննությանը և դրա դրսևորումներին «Սասնա ծռեր» էպոսում: Առաջադրված խնդիրը լուծելու համար ուսումնասիրվել են շումերա-աքքադական դիցաբանությունը, արատտական դիցարանը և հայերեն-շումերերեն ընդհարությունները: Կիրառվել են միֆաքննադատական և համեմատական գրականագիտության մեթոդները՝ հիմք ընդունելով միֆաքննադատների կողմից առաջադրված Արևի և Լուսնի նախաառասպելի տեսությունը, իսկ համեմատության հիմքում հնդ-իրանական դիցաբաններում Միհրի աստվածային կերպարի ընդհանրություններն ու տարբերություններն են: Հոդվածի նպատակն է պատմագիտական և սեպագրագիտական նորագույն բացահայտումների միջոցով կատարել «միհր» բառի ստուգաբանությունը և որոշարկել այդ անունը կրող աստվածության տիեզերական և դիցաբանական էության հիմքը ազգային ամենավաղ դիցարանում և ազդեցությունը «Սասնա ծռեր» էպոսի կերպարային համակարգի վրա: Եզրակացվում է, որ Միհրի առասպելը ստեղծվել է Արևի տիեզերագիտական գործառույթների և Արատտայի հայկական դիցարանում գերագույն Աստծո դիցաբանական գործունեության հիմքի վրա, հետագայում ծագող և մայր մտնող Արևի բնույթը էպոսում արտահայտվել է դիցաբանական երկու կերպարների միջոցով, որոնք ներկայացնում են Միհրի արևային էության երկփեղկումը: Մեծ և Փոքր Միհր անունները կրող դյուցազունների էության այլաբանական շերտը կապվում է Արևի կենդանական խորհրդանիշ առյուծի և ժայռի մեջ փակվելու հետ, ինչը անմիջականորեն աղերսվում է սեզոնային արևադարձերի ընթացքում Արևի շարժին և դիրքին:*

Հիմնաբառեր՝ *Միհր-Միհեր, Արև, նախաառասպել, աստղային ինքնություն, միֆաքննադատություն, արևադարձ, դիցարան, խորհրդանիշ*

Ներածություն

Միհրի դիցաբանական և աստղագիտական բնութագիրը և նրա տեղն ու դերը հայոց դիցարանում բազմաթիվ հայ և օտար գիտնականների ուսումնասիրության և հետաքրքրության առարկան է եղել: Առաջիններից մեկը Միհրին անդրադարձել և ունեցած ամբողջ տեղեկությունը մեզ է փոխանցել Ղևոնդ Ալիշանը իր «Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց»[1] աշխատության մեջ: Միհրի մասին Ալիշանի տեղեկությունը շատ սեղմ է, անվան մեջ «հուր» արմատը նկատում է, բայց դրա վրա կանգ չի առնում և անմիջապես առաջադրում է իրանական ծագումը, որ նա Որմիզդի ծնունդն էր: Որմիզդ-Արամազդ առնչությունը առհասարակ չի քննարկվում: Եթե «Միհր» բառը բարդություն է, և երկրորդ արմատը «հուրն» է, ապա թե ինչպիսի իմաստային արժեք ունի առաջին արմատը, այդ հարցը Ալիշանը չի քննում:

«Միհրը հայոց մեջ» արժեքավոր ուսումնասիրության մեջ Թադևոս Ավդալբեգյանը քննում է «Միհր» անվան ծագումնաբանությունը՝ նկատելով, որ Միհրի պաշտամունքը կարևոր տեղ է ունենցել հայ հեթանոսական կյանքում: «Միհր» բառի հնարավոր բոլոր փոփոխակների քննության ընթացքում Ավդալբեգյանը «Միհրը» համարում է արմատ՝ հնչյունափոխված հնարավոր տարբերակներով, և այս բառից բաղադրված մյուս բառերը մակաբերում նրանից[2]: Մ. Էմինը նույնպես «Մեհ» արմատից բաղադրված բառերը, ինչպես

---

[1] Տե՛ս **Հ. Ղևոնդ Ալիշան,** Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ-Ս. Ղազար, 1910, էջ 283:

[2] Տե՛ս **Ավդալբեգյան Թ.,** Հայագիտական հետազոտություններ, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ, 1969, էջ 16:

«մեհյան», «մեհեկան», բխեցնում է «Միհր» բառից՝ դարձյալ այն համարելով արմատական բառ[1]: Միհր անվան փոփոխակներից տասներորդը Ավդալբեգյանը համարում է Միերը. «Միեր Առյուծաձև կամ Մեծ Միեր, Միեր Պստիկ կամ Միերիկ, Միերի դուռ Վանում, Միերի տապան(= Սասուն), Միերի բերդ Սասնում, Միերի տոհմ Սասնում»[2]: Տասնմեկերորդ և տասներկուերորդ փոփոխակներն են «Մեհր» և «Մերհ» տարբերակները, որոնցից առաջինը դարձյալ Աստծո անուն է, և դարձյալ ընկալվում է որպես անտրոհելի արմատ: Հետագա շրջանի հետազոտողները բառի կառուցվածքին և ստուգաբանությանը առանձին ուշադրություն չեն դարձրել, իսկ բառը պատմություն և կենսագրություն ունի և կարող է լույս սփռել երևույթի ծագումնաբանության վրա:

Մե-ի հուրը կամ Արարիչ Աստծո օրենքները՝ ըստ Արատտայի և Շումերի դիցաբանության

Արդեն գրեթե հարյուր տարի հայտնաբերվել, վերծանվել, թարգմանվել և մեզ առնվազն ռուսերենով հասանելի են շումերաաքքադական վիպերգերը, էպիկական պատումներն ու դյուցազնավեպերը, աշխարհի առաջատար շումերագետների ուսումնասիրությունները՝ նվիրված այդ տեքստերի վերծանմանը և վերլուծությանը[3]: Այս ամենը ահռելի նյութ է պարունակում հայոց ամենավաղ դիցարանի, աստվածների աստիճանակարգի, նրանց տիեզերաստեղծ գործառույթների, ընտանիքի, ազդեցության ոլորտների մասին: Աստվածների այս ամենավաղ խումբը պատմաբան Արտակ Մովսիսյանը

---

[1] Տե՛ս **Эмин Н.,** Исследования и статьи, М., изд. В. Гатцук, 1896, էջ 26-27:

[2] **Ավդալբեգյան Թ.,** նշվ. աշխ., էջ 13-22:

[3] 1963 թվականին Նշան Մարտիրոսյանի թարգմանությամբ լույս է տեսել «Գիլգամեշ» դյուցազնավեպը արևմտահայերենով, իսկ 1982-ին՝ «Հին Արևելքի պոեզիան»՝ որոշ պատումների թարգմանությամբ:

կոչել է Արատտայի դիցարան[1], կարելի է ածանցումով այն անվանել արատտական դիցարան: Զուգադրելով և համադրելով այս ամենավաղ դիցարանը ամենաուշ շրջանի նախաքրիստոնեական դիցարանին՝ փորձենք որոշարկել Միհր աստծո աստղագիտական և դիցաբանական տեղը այդ աստիճանակարգում, նույնն է թե՝ Արեգակնային համակարգում, և Միհրի աստղաբանական ծագումն ու գործառույթը դիտարկենք արատտական գերազույն աստվածներից մեկի՝ Հայայի հետ կապի և զարգացման մեջ:

Հայան Արատտայի հայկական պետության և Շումերի հովանավոր աստվածն է, որի անունով էլ Շումերի բնակիչներն իրենց երկիրը կոչել են Կի-Էնկի (Կի-երկիր, էն-տիրակալ), այսինքն՝ Հայայի երկիր: Ըստ Հայային նվիրված դիցապատումների[2]՝ աստվածային **Մե** ուժերը գտնվում էին Հայայի մոտ, իսկ ի՞նչ էր նշանակում այդ Մե-ն:

Շումերագետները (Ս. Կրամեր, Տ. Յակոբսեն, Յ. Կարստ, Ա. Դավթյան) միահամուռ այս Մե-ն թարգմանում են «աստվածային օրենքներ», որոնցից բաղադրված է Արարիչ Աստծո հաստատած երկրային կարգը: «Մե» արմատը անզեն հայացքով հայտնաբերելով ժամանակակից հայերենի բազմաթիվ բառարմատներում՝ այնուամենայնիվ փորձեցինք ճշգրտել բառի շումերական իմաստը, և բազմաթիվ ածանցյալ իմաստների կողքին գտնվեց Մե-ի «աստված» իմաստը[3]: Աստված և իր օրենքը կամ կարգը, բնականաբար, նույնական են: Կենաց ծառի կառույցը, որ նույն Արեգակնային համակարգն է, մեկից տասը մոլորակներից կազմված աստիճանակարգ է, որի ամենաբարձր կետը՝ բարձրագույն **Է**-էությունն է կամ Հայը

---

[1] Տե՛ս **Մովսիսյան Ա.**, Հնագույն պետությունը Հայաստանում Արատտա, Եր., ՀՀԴ հրատ, 1992, էջ 48-51:

[2] Տե՛ս **Stephanie Dalley,** Myths from Mesopotamia, Creation, the Flood, Gilgamesh and Other, New York, Oxford University Press Inc., 2000, 339 էջ:

[3] Տե՛ս **Դավթյան Ա.,** Հայերեն-շումերերեն ընդհանրությունների բառարան, Եր., հեղինակային հրատ., 2014, էջ 326:

Աստված, որի թիվը մեկն է, բառ, որի մեջ կա արդեն հիշատակված «մե»-ն: Մարտիրոս Գավուքճյանը նկատել է շումերերեն me-«մենք» և հայերեն մե-ք-մենք իմաստային և բառակազմական նույնությունը[1], այսինքն՝ Մե-ն որպես տիեզերաստեղծ եզակի ոգի, և նրանից արարված համակարգը՝ որպես առաջին դեմքից սերված անվերջ հավաքականություն, որն արևմտահայերենում դրսևորվում է հենց հոգնակերտ ք-ի կիրառմամբ՝ «մեք», իսկ արևելահայերենում ունի հոդավոր տարբերակը՝ «մենք»: Քանի որ Աստծո ստեղծած այս կարգակառույցը չէր կարող չունենալ իր կենսատու հուրը, որի շնորհիվ միայն կարող էր կյանքն ու նյութական տիեզերքն իրականանալ, ապա Բարձրյալը Սուրբ Երրորդության ոգեկառույցը ստեղծելուց հետո պետք է արարեր հոգևոր տիեզերքը, որի միջուկը Արևն է, որին տրվելու է Ար անունը, և որը դառնալու է Աստծո Մե օրենքների կրողը կամ պահապանը: Հետևաբար՝ Մե-ի հուրը արևն է: «Մեհուրը», հայերենի հնչյունափոխության համաձայն, դարձավ Միհր՝ որպես Արևի և լույսի Աստված՝ ծագող և մայր մտնող Արևի հավերժական պտույտով, դարձավ Միհր՝ որպես հայոց դյուցազնավեպի գերագույն հերոս, որ դիցաբանության մեջ դրսևորվեց որպես ժայռից ծնվող և ժայռի մեջ փակվող աստվածություն: Պտույտը կարող էր լինել արեգակնային տարվա շրջափուլից (ձմեռային արևադարձի օրը համարվում է Միհրի ծնունդը) մինչև Արևի մեկ օրվա պտույտը՝ արևածագից արևամուտ: «Մե» արմատի բնիկ հայկականությունը կասկած չի հարուցում, մանավանդ նրա առնչությունը ամենայն աստվածայինին: Ար Աստծո անունը վերցրեց «մե» արմատը՝ դառնալով Արմե-Արմեն՝ որպես երկրանուն և ազգի անուն[2]: «Մե» արմատն է ըն-

---

[1] Տե՛ս **Գավուքճյան Մ.,** Ուսումնասիրություններ հայոց հնագույն պատմության, Եր., 2010, էջ 16:

[2] Տե՛ս **Մովսիսյան Ա.,** Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում, Եր., ԵՊՀ հրատ., 2005, էջ 43:

կած «մելիք» բառի հիմքում, մելիքությունը՝ «մալքուտ» հնչողությամբ սեմական լեզուներում ունի «արքայություն» իմաստը, որով անվանվում էր Կենաց ծառի տասներորդ աստիճանը, որ Երկիր մոլորակն է[1]: Աստված Մե-ով լեցուն արարածներին տվեց երկրային արքայության իրավունք Երկիր-Մելիքության վրա, իսկ մելիքությունը՝ որպես պետական կառավարման մոդել, բացի հայերից կամ ար-մեններից, ուրիշ ազգություն չունի[2]: Աստվածայինին ամենաանմիջական աղերսն ունի «մե» արմատից կազմված նախաքրիստոնեական տաճարի անունը՝ (մե)հեան-(մե)հյանը, որ ուղղակիորեն ստուգաբանվում է որպես Մե-ի պաշտամունքի վայր: Նշանակում է՝ Միհրի անունն ու պաշտամունքը բացառապես հայկական ծագումնաբանություն ունեն և հերքում են այն թյուր տեսակետը, որ այն փոխառված աստվածություն է: Ինչ վերաբերում է Միհրի իրանական ծագմանը, ապա այն ունի պատմագիտական, աստղագիտական և դիցաբանական խախուտ հիմք, քանզի բոլորովին հաշվի չեն առնվել վերջին հարյուրամյակի սեպագրագիտական և պատմագիտական բացահայտումները:

Հարցի առնչությամբ արժեքավոր պատմական փաստ է վկայաբերում հայագետ Հովիկ Ներսիսյանը. «Միհրի (իմա՝ Միթրայի) տարածուն պաշտամունքի ծնունդ տվող գաղափարի ծննդավայրը, որը ծնող ժողովրդի հոգևոր մշակույթի արտացոլումն է, բացահայտել են 1907 թ. Հայկական լեռնաշխարհի Հթիթների մայրաքաղաք Բողազքոյում գտնված սեպագիր սալիկները, ուր ներկայացվում է Հթիթների թագավոր Սուփիլուլիումայի (մ.թ.ա.1344-1322) և Հուրյանների (խուռիների) թագավոր Շաթթիվազայի միջև կնքված պայմանագի-

---

[1] **Кейт Ридерс,** Каббала, М., изд. Фаир-Пресс, էջ 7-8:

[2] Տե՛ս **Ավետիսյան Ս.,** Կենաց ծառի նշանագիտական կառուցվածքը Լևոն Խեչոյանի արձակում, «Գրականագիտական հանդես», ԺԹ, Եր., «Արմավ» հրատարակչություն, 2019, էջ 91-106:

ը, որտեղ հիշատակվում է Միհրը, որը արքայության աստծո հետ պաշտվում է որպես Հուրյանների և Հթիթների միջև կնքված պայմանագրի հովանավոր»[1]: Պատմական այս վավերագիրը վկայակոչում է կրոնի պատմաբան Ֆրանց Կյումոնը. նա գրում է՝ համաձայն մի տեսակետի՝ վեդայական Միթրա-Վարունա զույգը, ինչպես նաև Միթրա-Ահուրա զույգը Ավեստայից և էլի մի շարք աստվածություններ, որոնք ներկայացնում են Արևը, Լուսինը և մոլորակները, փոխառված են հնդիրանցիների կողմից հարևան մի ժողովրդից, որն ավելի համակարգված գիտելիքներ է ունեցել տիեզերքի մասին, և որ նրանք աքքադները կամ Բաբելոնում վերաբնակված սեմիտներն են: Ֆ. Կյումոնը այդ վարկածին հակադրում է Կապադովկիայից հատնաբերված սեպագիր արձանագրությունները, որոնք վկայում են, որ հնդիրանական աստվածներ Միթրան, Վարունան, Ինդրան մ.թ.ա. 14-րդ դարում պաշտվել են Միտանիի բնակիչների կողմից, որոնք ապրում էին Միջագետքից հյուսիս[2]:

Պատմաբանասիրական, աղբյուրագիտական քննությամբ հիմնավորելով, որ նշված տարածքները և հիշատակված թագավորությունները հայկական են՝ Հ. Ներսիսյանը վերջնականապես փակված է համարում Միհրի՝ օտար աստվածություն լինելու հարցը. «Հնդիրանական և պարսկամետ բանասերների անընդհատ և հարատև քարոզարշավի հետևանքով պատմագիտության մեջ գերիշխում է այն վարկածը, որ հայերը Միհրի պաշտամունքը ընդօրինակել են զրադաշտական պարսիկներից, որոնք մ.թ.ա. 395-ից հետո է, որ կիրառեցին դրա պաշտամունքը և միաձուլեցին զրադաշտականության հետ»[3]: Բանագետ Ա. Պետրոսյանը նույնպես նկա-

---

[1] **Ներսիսյան Հ.,** Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., հեղինակային հրատ, 2011, էջ 625:

[2] **Кюмон Ф.,** Мистерии Митри, СПб., «Евразия», 2000, с. 14-15.

[3] **Ներսիսյան Հ.,** նշվ. աշխ., էջ 638:

տում է, որ «Միթրասի՝ արևմտյան Միթրայի պաշտամունքն այն տեսքով, որով հասել էր Հռոմ մ.թ.ա. I դ., ոչինչ չուներ ընդհանուր զրադաշտական Իրանի Միթրայի հետ, բացի անունից: Հռոմեական Միթրասի բոլոր հիմնական հատկանիշները (ծնունդը ժայռից, պաշտամունքը որմնախորշերում կամ քարայրներում, կապն առյուծի հետ և այլն) հասնում են մինչև Խալդի, բայց ոչ ավելի արևելք»[1]: Իրականում Միհրի պաշտամունքը միայն հազար տարի հետո Արտաքսերքսես Բ-ի միջոցով մուտք գործեց Պարսկաստան, ապա Հնդկաստան և տարածվեց Եվրոպայում. Միհր անունը յուրաքանչյուր ազգային լեզվում ենթարկվեց համապատասխան հնչյունափոխության՝ Միթրա, Միսրա, Միթր, Մեհր ձևերով՝ հիմքում ունենալով «մե» արմատը, որը հայերենում նույնպես հնչյունափոխվելիս «մի» է դառնում:

Ծագող և մայր մտնող Արևի խորհրդաբանությունը Միհր-Մհերի կերպարում

Երկիր մոլորակի պտույտը արևի շուրջ Արևի երկրային ընկալմանը տվել է երկու եզր՝ ծագող և մայր մտնող՝ ուղիղ իմաստով, ծնվող և մեռնող՝ մետաֆորիկ իմաստով: Հայագետ Արթուր Արմինը նկատում է, որ ազգային էպոսում մեծ Մհերը ունի արևային էություն, իսկ Փոքր Մհերը՝ լուսնային: Ըստ մշակութաբանի՝ Արև-Լուսին և ցերեկ-գիշեր բնական և դիցաբանական հակադրությունը էպոսում դրսևորվել է Մեծ Մհեր-Մեծ Մելիք էպոսային զույգի հակամարտությամբ[2]: Չհամաձայնելով Փոքր Մհերի լուսնային էության դրույթին՝ կարծում ենք՝ Միհրի արևային էության երկփեղկումը էպոսում ուղղակիորեն ներկայացնում է ծագող մանուկ-երիտա-

---

[1] **Պետրոսյան Ա.,** Հայկական դիցարանի հնագույն ակունքները, «Պատմա-բանասիրական հանդես», թիվ 2, Եր., «Գիտություն», 2004, 214-215:

[2] Տե՛ս **Արթուր Արմին,** Հալդիի դարպասներ հնագույն դիցարանի աստղային և թվային կառույցը, Եր., հեղ. հրատ, 2020, էջ 184-185:

սարդ արևը՝ իր կենդանական խորհրդանիշ առյուծով, և մայր մտնող-մեռնող արևը՝ անվերջ վերադարձի խոստումով: Դիցաբանական պատկերը իր այլաբանական բանաձևմամբ դարձյալ ներկայացնում է ժայռեղեն երկրի արևածագը՝ ժայռից ծնվող Աստված, և ժայռի, լեռան կամ սարի հետև անցնող արևը՝ որպես ժայռի մեջ փակվող Աստված: Հետևաբար՝ Միհրի աստղային ինքնության երկու շերտերը էպոսում դրսևորվել են երկու տարբեր կերպարների միջոցով, որոնցից ոչ մեկը լուսնային բնույթ չունի: Լուսնային էության կրողն էպոսում մեծ և փոքր մելիքներն են, և Արև-Լուսին հակադրությունն-հերթագայությունը ունի թե՛ աստղագիտական, թե՛ ծագումնաբանական ակունք՝ Աստված-մարդ հակամարտության իմաստով:

Կրկին վկայենք, որ Միհր-Միհեր անվան առաջին վանկը «մե» արմատն է, որը, ըստ շումերագետ-սեպագրագետների, վերծանվում է որպես «աստվածային օրենք», նույն Մե-ն է «Մելիք» բառի առաջին արմատը, որը բառին տալիս է հեշտությամբ մեկաբանելի իմաստ՝ Մե-ով լեցուն, նույնն է թե՝ աստվածային օրենքներով լեցուն, առաջինն Աստված է, երկրորդը՝ մահկանացու, հետևաբար էպոսում Միհեր-Մելիք, Դավիթ-Մելիք հակամարտության հիմքում աստվածային զարմը ոչնչացնելու, նրա սերմը թալանելու, նրա հնարավորություններին տիրանալու մահկանացուի նենգ մղումներն են: Մեռնելիս Մեծ Մելիքը կնոջը պատգամում է. «Իսմի՛լ, թե Միհերից ու իր ձիուց ջինս չվերունք, Միհերի ցեղ մեր քոքըն տի կտրի»[1]: Իսմիլը կատարում է Մեծ Մելիքի պատգամը. տեղի է ունենում արևային կլանի կարգականոնի խախտում. լուսնապաշտների կլանը գողանում է Արևի Աստծո սերմը՝ հզորացնելու իր զարմը: Մեծ Միհերը կարգազանցության համար պատժվում է մահվամբ, նույն սխալը գործում է որդին՝ Դավիթը՝ դարձյալ հատուցելով կյանքով: Այսինքն՝ էպոսում Մեծ

[1] Սասունցի Դավիթ, Եր., «Լույս», 1981, էջ 114:

Միերի, ապա նրա որդու՝ Դավթի վարքում դրսևորվում է մի երևույթ, որ կապված էր Միհրի աստվածային գործառույթների հետ, հենց այս հանգամանքը շեշտադրում է Միհրի առնչությունը Մե-ին՝ աստվածային կարգին. նա ոչ միայն լույսի, բարության, Արևի ու կրակի Աստվածն է, այլև դաշինքի, ուխտի, երդման, պայմանագրերի հովանավոր Աստվածը, որ խստորեն պատժում էր ուխտադրուժներին և պայմանախախտներին: Մեծ Միերը եղբայրության դաշինք էր կնքել Մեծ Մելիքի հետ: Որքան էլ Արմաղանն ու Ձենով Օհանը զգուշացնում են, որ Մըսր գնալը աղետալի կլինի Սասնա տան և Միերի համար, նա չէր կարող չգնալ, որովհետև երդմնազանցությունը աստվածային կարգի խախտում է՝ «Ես հետ աստծու ուխտ եմ արեր», կամ՝ «Աստծու ուխտ թող վեր ինձ ըլնի» բանաձևումները վկայում են, որ Աստծով հաստատված ուխտը խախտելը հանցանք է, հետևաբար երդմնակալությունը պետք է կայանար միայն անհրաժեշտաբար, ըստ տիեզերական աստիճանակարգի և կանոնների: Միհրը նաև դատավոր է, արդարություն հաստատող և կարգազանցներին պատուհասող. այս գործառույթը դրևորվել է Փոքր Միերի կերպարում, նա պատժում է թշնամուն, դրսևորում դաժանություն կարգազանցների նկատմամբ. «Թվում է, թե այս հերոս դիցն աններում և արյունարբու է, սակայն խնդիրն այն է՝ անմահ ու անժառանգ Փոքր Միերը տիեզերակարգը կանոնավորող ժամանակի Աստվածն է»[1]:

Մեծ Միերի կողմից առյուծին, ապա Սև եզանը սպանելու և Միհրի երկնային ցլին սպանելու այուժեները իրենց այլաբանական նշանակությամբ նույնական են. երկու դեպքում էլ նպատակը կենսական հոսքերի ապահովումն է: Այս երևույթներն ունեն ոչ թե նշանագիտական, այլ տիեզերական հիմք և կապվում են Արևի տարեկան ընթացքի և սեզոնային արևադարձերի հետ: Արդեն հիշատակված Արևի աստվա-

[1] **Արթուր Արմին,** նշվ. աշխ., էջ 189:

ծացման ծեսի հիմքում աստղագիտական երևույթներն են, որոնք պատումային ամրագրում ստանալով՝ էպոսում ձեռք են բերել խորհրդապաշտական նշանակություն: Արթուր Արմինը նկատում է, որ «Մեծ Միհրի «առյուծաձև» մականունը խորհրդանշում է Արև-Միհրի մուտքը «Առյուծի» համաստեղություն՝ ամառային արևադարձ, երբ Արևն իր բարձրագույն դիրքում է, հակառակորդ Լուսնի իպոստասը պետք է մեռնի»[1]: Հետևաբար, եթե էպոսի Մեծ և Փոքր Միհրի կերպարների հիմքում Միհրի աստվածային ինքնության որակներն են, ապա վերջինիս նկարագիրը և գործողությունները պայմանավորված են Արևի տիեզերական գործառույթով: Բանագետ Ա. Պետրոսյանը, հիմք ընդունելով Ֆրանց Կյումոնի կողմից ներկայացված Միթրայի առասպելի տասը առանցքային բնութագրիչ գործողությունները, դրանց զուգահեռում է էպոսային Մեծ և Փոքր Միհրների տասը նույնական կամ նման գործողություն-հատկանիշները[2], ինչը հիմնավորապես ապացուցում է, որ ազգային էպոսի հիմքում ընկած է միհրականությունը՝ որպես տիեզերաճանաչողության և աստվածընկալման համակարգ:

Արևի և լուսնի նախաառասպելը՝ որպես ազգային էպոսի հիմք

Անգլիական միֆաքննադատության ծիսական ուղղության հինադիր Ջեյմս Ֆրեյզերը[3] դիցաբանության ձևավորման հիմքում դնում էր սեզոնային-օրացույցային ծեսերը, մասնավորապես բնության պարբերափուլերը ներկայացնող ծեսերը,

---

[1] **Արթուր Արմին,** Հնագույն հեթանոսական Աստվածաշունչ՝ «Սասնա ծռեր» էպոսը, հ. 1, Լոս-Անջելես, «Սփյուռք», 2007, էջ 348:

[2] Տե՛ս **Петросян А.,** Армянский Мхер, западный Митра и урартский Халди, «Армянский эпос «Сасунские удальцы» и мировое эпическое наследие», Ер., 2004, էջ 42-60:

[3] Տե՛ս **Джеймс Фрэзер,** Золотая ветвь. Исследования магии и религии, М., изд. «АСТ», 2010, 784 էջ:

որոնք պատումային-բանավոր արտահայտություն են գտել մեռնող և հառնող աստվածների մասին առասպելներում և դիցապատումներում: Այդպիսի առասպելներ և դիցապատումներ կան բոլոր ժողովուրդների բանահյուսության և հավատալիքների մեջ և ներկայացնում են տիեզերածնության և բնության երևույթների մասին տարբեր էթնիկ խմբերի պատկերացումները:

Էպոսի առաջին ճյուղի սյուժեն կապվում է քաղցրահամ ջրերի և իմաստության Աստծուն՝ Հայային նվիրված դիցաբանական պատումներին. դրանք նախաառասպելի արժեք ունեն ազգային էպոսի համար, որի հերոսները ծնվում են ջրից, իսկ Հայան՝ Արատտայի և Շումերի գերագույն աստվածներից մեկն էր, որի սերմը պահվում էր ջրերում և բեղմնավորող հատկություն ուներ[1]: Միֆաքննադատական գրականագիտության յունգյան ուղղության ներկայացուցիչները առաջադրեցին մոնոմիֆի, այսինքն՝ միակ առասպելի տեսությունը, որն ընկած է տվյալ գրական ստեղծագործության հիմքում: Նախապես մոնոմիֆ էր համարվում արդեն հիշատակված մեռնող և հարություն առնող Աստծո առասպելը:

Հայոց վաղ և ուշ շրջանի դիցարաններում բնության զարթոնքի և մահվան ծեսը բանավոր, ապա գրավոր ամրագրում է ստացել Դումուզիի (Արատտա հայկական պետության հովանավոր Աստվածն էր) և Արա Գեղեցիկի առասպելներում: Միֆաքննադատ Ռոբերտ Գրեյվսի[2] համոզմամբ՝ նախնական առասպելը, որն ընկած է գրական ստեղծագործության հիմքում, Արևի և Լուսնի հակամարտության սյուժեն է: Արևի աստվածացման ծեսից, որ կապվում էր սեզոնային արևադարձերի, արեգակնային տարվա սկզբի հետ, ծնվում էին արևին նվիրված առասպելներ, որոնք արական, այսինքն՝

---

[1] Տե՛ս **Якобсен Торкильд,** Сокровища Тьмы: История мессопотамской религии, М., изд. «Восточная литература», 1995, էջ 71-76:

[2] Տե՛ս **Грейвс Роберт,** Белая богиня, М., изд. «Иностранка», 2015, 704 էջ:

մտավոր, ռացիոնալ նախասկիզբը խորհրդանշող սյուժեներ էին՝ լուսնային նախասկզբին հակադրվող-հակամարտող, որ խորհրդանշում էր տիեզերքի իռացիոնալ, բացասական, զգացական եզրը:

Բանագետ Սարգիս Հարությունյանը «Հայ առասպելաբանություն» աշխատության մեջ հանգամանորեն ներկայացնում է արևային առասպելները, արևի անձնավորման բազմազանությունը ժողովրդական ընկալումներում, պաշտամունքի ազգային ակունքը[1]: Հայոց տոմարում Արեգ ամսվա գոյությունը վկայում է, որ արևապաշտությունը ծագումնաբանական հիմք ունի, որը կապվում է արեգակնային ռիթմերով ազգային կենսաժամանակը կազմակերպելու հետ:

Քաղոց ամսվա Միհր օրը՝ դեկտեմբերի 23-ին, Հայկյան սրբազան տոմարի համաձայն՝ Բարեփառ Միհր դիցի ծննդյան՝ Արևագալի տոնն է: Ար Աստծո անունը, որ երկրանուն և ցեղանուն է հայերիս համար, «Արև» և «Արեգ» բառերն է բաղադրում, «Արմե» և «Մեհուր» բառերի հիքում կա նույն «մե» արմատը, այսինքն՝ արևային Աստծո երկու անունները նույն աստղային ինքնության տարբեր ռիթմերն են ներկայացնում. Արեգով արեգակնային տարին է սկսվում մարտի 21-ին և գարնանային արևադարձի օրն է, իսկ Միհրի ծնունդը՝ դեկտեմբերի 23-ին, կապվում է ձմեռային արևադարձի հետ: Յուրաքանչյուր ցիկլ ունի իր ավարտը, որը դիցաբանական ընկալումներում ներկայանում է վախճանաբանական յուրօրինակ դրսևորումներով, Արևի անկման և վերադարձի ցիկլերի բազմազանությունը և ժամանակային փոքր ու մեծ հատույթավորումները ստեղծել են նրա հետ կապված միֆեր, որոնք ժամանակն ու կյանքը նորոգելու խորհուրդն ունեն:

---

[1] Տե՛ս **Հարությունյան Ս.,** Հայ առասպելաբանություն, Բեյրութ, Համազգայինի տպարան, 2000, էջ 40-60:

Միհրի առասպելը, որ իր աշխատության մեջ ներկայացնում է Սարգիս Հարությունյանը՝ որպես «վախճանաբանական մտահայեցությունների ամենանախնական՝ տարեկան ցիկլի»[1] ավարտի արտահայտություն, դրսևորվում է Միհրի քարայրում՝ Ագռավաքարում, փակվելով: Վերադարձի խորհուրդը, որ կապվում է աշխարհի կործանման և վերաշինման հետ, առավել մեծ ժամանակային շրջափուլ է ենթադրում, քան արևի տարեկան պտույտն է՝ դրանով Միհր-Միհրի աստվածային էության աստղագիտական ավելի խորքային շերտ բացելով, որը հանգամանորեն ներկայացնում է Արթուր Արմինը[2] իր մեծածավալ աշխատության մեջ:

Այսպիսով, կատարված ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ Միհրի պաշտամունքը բնիկ հայկական ծագումնաբանություն ունի, քանի որ սեպագիր արձանագրությունների տվյալները հնարավորություն են տալիս հաստատելու, որ արևելքում և արևմուտքում միհրականության հայտնվելուց հազար տարի առաջ այդ աստվածությունը հիշատակվել է հայկական թագավորությունների պայմանագրերում, իսկ Միհր անվան ստուգաբանությունը՝ կատարված հայերեն-շումերերեն ընդհանրությունների հիման վրա, վկայում է, որ Մե-ի հուրը համարվող Աստծո ծնունդը կապվում է Արատտայի հայկական դիցարանի հետ:

Միհր Աստծո արևային բնույթը հայ ազգային էպոսում դրսևորվել է երկու կերպարների միջոցով, որոնք խորհրդանշում են արևածագն ու արևամուտը՝ Ժայռածին և առյուծասպան Մեծ Միհրը և ժայռում փակված Փոքր Միհրը՝ որպես ժամանակը կարգավորող և արդարություն հաստատող փրկիչ: «Սասնա ծռեր» էպոսի հիմքում ընկած են Արևի և Լուսնի հակամարտության նախաառասպելը և հայոց ջրային

---

[1] Նույն տեղում, էջ 452-463:

[2] **Արթուր Արմին,** Հնագույն հեթանոսական Աստվածաշունչ՝ «Սասնա ծռեր» էպոսը, էջ 345-439:

ծագումնաբանությունը վկայող նախաառասպելը ջրերի և իմաստության Աստված Հայայի վերաբերյալ, որը ապրում էր քաղցրահամ ջրերում և համարվում էր տիեզերաստեղծ բարձրագույն ոգին:

Գրականություն

1. Ավդալբեգյան Թ., Հայագիտական հետազոտություններ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969, էջ 13-22
2. Ավետիսյան Ս., Կենաց ծառի նշանագիտական կառուցվածքը Լևոն Խեչոյանի արձակում, «Գրականագիտական հանդես», ԺԹ, Երևան, «Արմավ» հրատարակչություն, 2019, էջ 91-106
3. Արմին Ա., Հալդիի դարպասներ. հնագույն դիցարանի աստղային և թվային կառույցը, Երևան, հեղ. հրատ., 2020, էջ 184-185
4. Արմին Ա., Հնագույն հեթանոսական Աստվածաշունչ՝ «Սասնա ծռեր» էպոսը, հ. 1, Լոս-Անջելես, «Սփյուռք», 2007, էջ 345-439
5. Գավուքճյան Մ., Ուսումնասիրություններ հայոց հնագույն պատմության, Երևան, հեղինակային հրատ., 2010, էջ 16
6. Դավթյան Ա., Հայերեն-շումերերեն ընդհանրությունների բառարան, Երևան, հեղ. հրատ., 2014, էջ 326
7. Հ. Ղևոնդ Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ-Ս. Ղազար, 1910, էջ 283
8. Հարությունյան Ս., Հայ առասպելաբանություն, Բեյրութ, Համազգայինի տպարան, 2000, էջ 452-463
9. Մովսիսյան Ա., Հնագույն պետությունը Հայաստանում. Արատտա, Երևան, ՀՀԴ հրատ., 1992, էջ 48-51
10. Մովսիսյան Ա., Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում, Երևան, Երևանի համ. հրատ., 2005, էջ 43
11. Ներսիսյան Հ., Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, հեղ. հրատ., 2011, էջ 625
12. Պետրոսյան Ա., Հայկական դիցարանի հնագույն ակունքները, Պատմա-բանասիրական հանդես, №2, Երևան, «Գիտություն», 2004, 214-215

13. Սասունցի Դավիթ, Երևան, «Լույս», 1981, էջ 114
14. Грейвс Р., «Белая богиня», Москва, изд. «Иностранка», 2015, 704 с.
15. Ридерс К., Каббала, Москва, изд. Фаир-Пресс, с. 7-8
16. Фрэзер Дж. Дж., «Золотая ветвь. Исследования магии и религии», Москва, изд. «АСТ», 2010, 784 с.
17. Эмин Н., Исследования и статьи, Москва, изд. В. Гатцук, 1896, с. 26-27
18. Петросян А. Армянский Мхер, западный Митра и урартский Халди / Հայկական «Սասնա ծռեր» էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը, Երևան, 2004, էջ 42-60
19. Якобсен Т., Сокровища Тьмы: История мессопотамской религии, Москва, изд. «Восточная литература», 1995, с. 71-76
20. Stephanie Dalley, Myths from Mesopotamia, Creation, the Flood, Gilgamesh and Other, New York, Oxford University Press Inc., 2000, 339 p.

■ **САТЕНИК АВЕТИСЯН**

ПРОЯВЛЕНИЯ БОЖЕСТВЕННОЙ СУЩНОСТИ МИХРА В ЭПОСЕ «САСНА ЦРЕР»

Резюме

Статья посвящена изучению мифологической и космологической характеристик Бога Михра и его проявлений в эпосе "Сасна Црер". Для решения поставленной задачи были изучены шумеро-аккадская мифология, араттский пантеон божеств и армяно-шумерские общности. Опираясь на теорию прамифа о солнце и луне, выдвинутую мифокритиками, в статье были применены методы мифокритики и сравнительного литературоведения, а в основе сравнения сходства и различия божественного образа Михра в индоиранских пантеонах. Цель статьи - посредством новейших историографических и клинописных открытий определить этимологию слова «Михр» и определить основу космологической и

мифологической сущности божества, носящего это имя в национальном архаичном пантеоне и его влияние на образную систему эпоса «Сасна Церр».

Делается вывод, что миф о Михре был создан на основе космологических функций Солнца и мифологической деятельности верховного бога армянского пантеона Аратты, позднее сущность восходящего и заходящего солнца была выражена в эпосе двумя мифологическими персонажами, которые представляют дихотомию солярной сущности Михра. Иносказательная сущность, солярная природа образов богатырей Мгера Старшего и Мгера Младшего связывается с поединком со Львом, животным воплощением символа солнца и с запиранием в скале, что напрямую связано с движением и положением Солнца во время сезонных солнцестояний.

Ключевые слова: *Михр-Мгер, Солнце, прамиф, астральная сущность, мифокритика,солнцестояние,пантеон*

■ SATENIK AVETISYAN

THE MANIFESTATIONS OF MIHR'S DIVINE IDENTITY IN DAREDEVILS OF SASSOUN EPIC POEM

Summary

The article is dedicated to the examination of the divine and celestial characteristics of God Mihr and his manifestations in Daredevils of Sassoun epic poem. To tackle this issue, I have studied Sumer-Akkadian mythology, pantheon of Aratta and Armenian-Sumerian language similarities. The mythological-critical and comparative literary methods have been applied proceeding from the proto-myth theory of the Sun and the Moon put forward by mythology critics where the comparison is based on the similarities and discrepancies of Mirh's divine character in Indo-Iranian pantheons.

The article aims at implementing etymological research of the word "Mihr" resorting to the newest findings of historiography and Cuneiform studies and to define the basis of that cosmic and mythological essence of

the divinity that bears that name in the earliest national pantheon and its influence on the system of characters of Daredevils of Sassoun epic poem. It is concluded that Mihr's legend was created based on the cosmological functions of the Sun and mythological activities of the supreme god of Armenian pantheon of Aratta, later the essence of rising and setting sun was manifested through two characters in the epic poem which represent the dichotomy of Mihr's solar essence. The allegorical layer of daredevils Mher the Elder and Mher the Younger is associated with the battle against the animated symbol of the Sun – the lion and incarceration inside the cave which directly associates with the movement and position of the Sun during solstices.

Key words: *Mihr-Mher, Sun, proto-myth, stellar identity, mythological criticism, solstice, pantheon, symbol*

- **Սաթենիկ Ավետիսյան –** բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի արվեստի կառավարման ամբիոնի դոցենտ: Հեղինակ է մեկ գիտական մենագրության՝ «Գիր և ինքնություն» խորագրով, և շուրջ քառասուն գիտական հոդվածի: Զբաղվում է գրականության տեսության. հայ և համաշխարհային գրականության, առասպելաբանության, արդի գրականության և գրաքննադատության խնդիրներով:

Сатеник Аветисян – кандидат филологических наук, ведущий научный сотрудник института литературы им. М. Абегяна НАН РА, доцент кафедры арт-менеджмента Ереванского государственного института театра и кино. Опубликовал монографию «Литература и идентичность», четырех десятков статей. Занимается вопросами истории и теории современной армянской литературы. Круг интересов: история армянской и мировой литературы, мифология, литературоведение.

Satenik Avetisyan – PhD in Philology, is Lecturer and Associate Professor at the Yerevan State Institute of Theatre and Cinematography and Senior Researcher at the Institute of Literature of the National Academy of Sciences of the Republic of Armenia. Avetisyan is the author of 1 monograph and 40 scientific articles. The scope of her scientific interests includes history and theory of Armenian and world literature, modern Armenian literary criticism and world mythology.
satenikavetisyan@litinst.sci.am